# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## N ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԱՀ-21/53-1

ք. Երևան «08» 11 2021թ.

«Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ն ի դեմս տնօրեն Վ. Ավագյան, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Ջի-Էս-Սի» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Ավետիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Ջնջել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **767,000 /յոթ հարյուր վաթսունյոթ հազար/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:** Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն

իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[22]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա:

Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ | «Զի-Էս-Սի» ՍՊԸ |
| ք. Երևան, Արմենակյան 153 | ք. Երևան, Աճեմյան 18շ. 44շին՝ |
| «ԱՅԴԻ ԲԱՆԿ» ՓԲԸ | «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 11811020544002 | Հ/Հ 20510220130310001 |
| ՀՎՀՀ 01508606 | ՀՎՀՀ 02258906 |
| Տնօրեն՝ Վ. Ավագյան | Տնօրեն՝ Հ. Մկրտչյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ. | Կ.Տ |

Հավելված N 1
«08» 11 2021թ. կնքված
ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԱՇ-21/53-1 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | մատակարարման | | |
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը** | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը** |
| 1 | 30237240/2 | Համացանցային տեսախցիկներ<br>/Արտաքին տեղադրման ցանցային տեսախցիկ/ | Hikvision, DS-2CD1023GO-I, Hangzhou Hikvision Digital Technology Co, Ltd | տեխնիկական բնութագիրը կցվում է *** | հատ | 17,625 | 70,500 | 4 | Ք. Երևան Աճառյան 2 | 4 | Ապրանքի մատակարարումը կիրականացվի պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում: |
| 3 | 30237240/4 | Համացանցային տեսախցիկներ<br>/Ներքին տեղադրման ցանցային տեսախցիկ ձայնի փոխանցման հնարավորությամբ/ | Hikvision, DS-2CD1047GO-L, Hangzhou Hikvision Digital Technology Co, Ltd | տեխնիկական բնութագիրը կցվում է *** | հատ | 15,000 | 45,000 | 3 | Ք. Երևան Աճառյան 2 | 3 | Ապրանքի մատակարարումը կիրականացվի պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում: |
| 4 | 30237240/5 | Համացանցային տեսախցիկներ<br>/Ցանցային տեսախցիկ 24/7 գունավոր պատկերով/ | Hikvision, DS-2CD1323GO-IU, Hangzhou Hikvision Digital Technology Co, Ltd | տեխնիկական բնութագիրը կցվում է *** | հատ | 45,000 | 45,000 | 1 | Ք. Երևան Աճառյան 2 | 1 | Ապրանքի մատակարարումը կիրականացվի պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում: |
| 7 | 32421300/1 | Ցանցային բաժանարար<br>/Ցանցային POE սվիչ/ | Hikvision, DS-3E0109P-E/M, Hangzhou Hikvision Digital Technology Co, Ltd | տեխնիկական բնութագիրը կցվում է *** | հատ | 26,400 | 26,400 | 1 | Ք. Երևան Աճառյան 2 | 1 | Ապրանքի մատակարարումը կիրականացվի պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում: |
| 9 | 32421100/1 | Ցանցային մալուխներ | Hikvision, DS-1LN5E-E/E, Hangzhou Hikvision Digital Technology Co, Ltd | տեխնիկական բնութագիրը կցվում է *** | մետր | 140 | 85,400 | 610 | Ք. Երևան Աճառյան 2 | 610 | Ապրանքի մատակարարումը կիրականացվի պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում: |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 10 | 32421100/2 | Ցանցային մալուխներ<br><br>/Ցանցային մալուխ արտաքին օգտագործման UTP Cat 5E PE/ | Hikvision, DS-1LN5E0-UU/E, Hangzhou Hikvision Digital Technology Co, Ltd | տեխնիկական բնութագիրը կցվում է *** | մետր | 200 | 61,000 | 305 | Ք. Երևան Աճառյան 2 | 305 | Ապրանքի մատակարարումը կիրականացվի պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում: |
| 11 | 32421100/3 | Ցանցային մալուխներ<br><br>/Ցանցային մալուխ արտաքին օգտագործման UTP Cat 5E PE տրոսով/ | ПАРИТЕТ, U/UTP Cat 5e 4x2x0.52PVC/Petr | տեխնիկական բնութագիրը կցվում է *** | մետր | 340 | 103,700 | 305 | Ք. Երևան Աճառյան 2 | 305 | Ապրանքի մատակարարումը կիրականացվի պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում: |
| 12 | 32321180/1 | Տեսասարքեր<br><br>/Դեմք սկանավորող և իդենտիֆիկացնող սարք/ | Hikvision, DS-K1T671M, Hangzhou Hikvision Digital Technology Co, Ltd | տեխնիկական բնութագիրը կցվում է *** | հատ | 110,000 | 330,000 | 3 | Ք. Երևան Աճառյան 2 | 3 | Ապրանքի մատակարարումը կիրականացվի պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում: |

* *Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

## *ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ****

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | անվանումը | տեխնիկական բնութագիր |
|---|---|---|
| 1 | Համացանցային տեսախցիկներ<br><br>/Արտաքին տեղադրման ցանցային տեսախցիկ/ | <u>Արտաքին տեղադրման ցանցային տեսախցիկ</u><br><br>Պատկերը՝ նվազագույնը 1/2.8" progressive scan CMOS, 0.01 Lux @(F1.2, AGC ON), 0.028Lux @ (F2.0, AGC ON)<br>Պատկերի որսման արագությունը՝ առավելագույնը 1/3վ, նվազագույնը՝ 1/100000վ<br>Պետք է համալրված լինի 3D DNR, IR cut filter, Auto-Iris, Slow Shutter,Digital WDR<br>Ապերտուրան՝ F2.0<br>Ոսպնյակի բացվածքը՝ 2.8 mm, 4 mm, 6 mm<br>FOV՝ 2.8 mm, հորիզոնական FOV 103°, ուղղահայաց FOV 59°, անկյունագծային FOV 118°<br>4 mm, հորիզոնական FOV 86°, ուղղահայաց FOV 46°, անկյունագծային FOV 102°<br>6 mm, հորիզոնական FOV 54°, ուղղահայաց FOV 30°, անկյունագծային FOV 62°<br>IR հեռավորությունը՝ նվազագույնը 30մ<br>Վիդեո սեղմում՝ նվազագույնը Main stream: H.265/H.264, Sub stream: H.265/H.264/MJPEG, |

| | | |
|---|---|---|
| | | Վիդեոպատկերի սեղմումը՝ նվազագույնը 32 Kbps-ից 8 Mbps<br>Պատկերի թույլտվությունը՝ 1920 × 1080<br>Main Stream 50Hz: 25fps (1920 × 1080, 1280 × 960, 1280 × 720)<br>Max. Frame Rate 60Hz: 30fps (1920 × 1080, 1280 × 960, 1280 × 720)<br>Sub-stream 50Hz: 25fps (640 × 480, 640 × 360, 320 × 240)<br>Max. Frame Rate: 60Hz: 30fps (640 × 480, 640 × 360, 320 × 240)<br>BLC, 3D DNR<br>Պրոտոկոլներ՝ TCP/IP, ICMP, HTTP, HTTPS, FTP, DHCP, DNS, DDNS, RTP, RTSP, RTCP, NTP, UPnP, SMTP, IGMP,<br>802.1X, QoS, IPv6, UDP, Bonjour<br>Աշխատանքային ջերմաստիճանը՝ նվազագույնը -30 °C ից 50 °C<br>Պաշտպանվածությունը՝ IP 67 |
| 3 | Համացանցային տեսախցիկներ<br><br>/Ներքին տեղադրման ցանցային տեսախցիկ ձայնի փոխանցման հնարավորությամբ/ | <u>Ներքին տեղադրման ցանցային տեսախցիկ ձայնի փոխանցման հնարավորությամբ</u><br><br>Պատկերը՝ նվազագույնը 1/2.8" progressive scan CMOS, 0.01 Lux @(F1.2, AGC ON), 0.028Lux @ (F2.0, AGC ON)<br>Պատկերի որսման արագությունը՝ առավելագույնը 1/3վ, նվազագույնը՝ 1/100000վ<br>Պետք է համալրված լինի 3D DNR, IR cut filter, Auto-Iris, Slow Shutter,Digital WDR<br>Ապերտուրան՝ F2.0<br>Ոսպնյակի բացվածքը՝ 2.8 mm, 4 mm<br>FOV՝ 2.8 mm, հորիզոնական FOV 114.5°, ուղղահայաց FOV 62°, անկյունագծային FOV 135.5°<br>4 mm, հորիզոնական FOV 86°, ուղղահայաց FOV 46°, անկյունագծային FOV 102°<br>6 mm, հորիզոնական FOV 54°, ուղղահայաց FOV 30°, անկյունագծային FOV 62°<br>IR հեռավորությունը՝ նվազագույնը 30մ<br>Վիդեո սեղմում՝ նվազագույնը Main stream: H.265/H.264, Sub stream: H.265/H.264/MJPEG,<br>Վիդեոպատկերի սեղմումը՝ Main stream: H.265+/H.265/H.264+/H.264, Sub-stream: H.265/H.264/MJPEG<br>Պատկերի թույլտվությունը՝ 1920 × 1080<br>Main Stream 50Hz: 25fps (1920 × 1080, 1280 × 960, 1280 × 720)<br>Max. Frame Rate 60Hz: 30fps (1920 × 1080, 1280 × 960, 1280 × 720)<br>Sub-stream 50Hz: 25fps (640 × 480, 640 × 360, 320 × 240)<br>Max. Frame Rate: 60Hz: 30fps (640 × 480, 640 × 360, 320 × 240)<br>BLC, 3D DNR<br>Պրոտոկոլներ՝ TCP/IP, ICMP, HTTP, HTTPS, FTP, DHCP, DNS, DDNS, RTP, RTSP, RTCP, NTP, UPnP, SMTP, IGMP,<br>802.1X, QoS, IPv6, UDP, Bonjour<br>Աշխատանքային ջերմաստիճանը՝ նվազագույնը -30 °C ից 50 °C<br>Պաշտպանվածությունը՝ IP 67 |
| 4 | Համացանցային տեսախցիկներ<br><br>/Ցանցային տեսախցիկ 24/7 գունավոր պատկերով/ | <u>Ցանցային տեսախցիկ 24/7 գունավոր պատկերով</u><br><br>Պատկերը՝ նվազագույնը 1/2.7" Progressive Scan CMOS , Color: 0.001 Lux @ (F1.0, AGC ON)<br><br>Պատկերի որսման արագությունը՝ առավելագույնը 1/3 վ<br><br>Wide Dynamic Range Digital WDR |

| | | |
|---|---|---|
| | | Ոսպնյակը՝ նվազագույնը 2.8 mm, հորիզոնական FOV 102°, ուղղահայաց FOV 56°, անկյունագծային FOV 127°<br><br>4 mm, հորիզոնական FOV 84°, ուղղահայաց FOV 45°, անկյունագծային FOV 99°<br><br>Ապերտուրան՝ F1.0, ֆիքսված ոսպնյակով<br><br>Ֆոկուսի խորությունը՝ նվազագույնը 2.8 mm: 1.7 m, 4 mm: 2.1 m<br><br>Սպիտակ լույսի հեռավորությունը՝ նվազագույնը 30մ<br><br>Պատկերի թույլտվությունը՝ 2560 × 1440<br><br>Main Stream: 50Hz: 20 fps (2560 × 1440) 25 fps (2304 × 1296, 1920 × 1080, 1280 × 720)<br><br>60Hz: 20 fps (2560 × 1440) 30 fps (2304 × 1296, 1920 × 1080, 1280 × 720<br><br>Sub Stream: 50Hz: 25fps (640 × 480, 640 × 360, 320 × 240)<br><br>60Hz: 30fps (640 × 480, 640 × 360, 320 × 240)<br><br>Վիդեո սեխմում նվազագույնը Main stream: H.265+/H.265/H.264+/H.264, Sub-stream: H.265/H.264/MJPEG<br><br>Պրոտոկոլներ՝ TCP/IP, ICMP, HTTP, FTP, DHCP, DNS, DDNS, RTP, RTSP, RTCP, NTP, UPnP, SMTP, IGMP, QoS, IPv6, UDP, Bonjour, SSL/TLS , ONVIF (PROFILE S, PROFILE G), ISAPI, SDK<br><br>Տեսախցիկը պետք է ունենա 24/7 գունավոր պատկեր<br><br>Աշխատանքային ջերմաստիճանը՝ նվազագույնը -30 °C ից 60 °C<br><br>Պաշտպանվածությունը՝ IP67 (IEC 60529-2013) |
| 7 | Ցանցային բաժանարար<br><br>/Ցանցային POE սվիչ/ | <u>Ցանցային POE սվիչ</u><br><br>Պորտերի քանակը 8 × 100 Mbps PoE պորտ, 1 × 100 Mbps Ethernet պորտ<br><br>Պորտի տիպը RJ45 port, full duplex, MDI/MDI-X adaptive<br><br>Ստանդարտները IEEE 802.3, IEEE 802.3u, IEEE 802.3x<br><br>MAC հասցեներ 2 K<br><br>Արագությունը 1.8 Gbps<br><br>PoE standard IEEE 802.3af, IEEE 802.3at<br><br>PoE պորտերը 1 to 8<br><br>Առավելագույն պորտի հզորությունը 30 W<br><br>PoE - 60 W |

| | | |
|---|---|---|
| | | ծախսը 65 W |
| 9 | Ցանցային մալուխներ | UTP cat 5e 24 AWG պղնձյա, ներքին աշխատանքների համար |
| 10 | Ցանցային մալուխներ<br><br>/Ցանցային մալուխ արտաքին օգտագործման UTP Cat 5E PE/ | <u>Ցանցային մալուխ արտաքին օգտագործման UTP Cat 5E PE</u><br><br>- 99,99% պղինձ<br><br>Ծածկույթի նյութեր - պոլիէթիլեն (PE)<br><br>Անվանական արտաքին տրամագիծ (մմ) 0.500 (24 AWG)<br><br>Մեկուսացում<br><br>Նյութ բարձր խտության պոլիէթիլեն (HDPE)<br><br>Տրամագիծը 0.88 ± 0.03 մմ<br><br>վահանակ<br><br>Հաստությունը 0.55 ± 0,03 մմ<br><br>Արտաքին անվանական տրամագիծը 5.0 ± 0.3 մմ<br><br>Ծածկույթներ Մաքրված, խարխուլ, հագեցած<br><br>Նյութ պոլիէթիլեն (PE)<br><br>Սև գույն<br><br>Տպում ծածկույթի վրա<br><br>Նիշերի բարձրությունը 2.8 մմ<br><br>Սպիտակ գույն<br><br>Տպման սխալը և տարածությունը ≤ ≤ 0,5%, 1 մ<br><br>Մալուխի ծածկույթի ֆիզիկական հատկությունները<br><br>Մինչև հագնել առաձգական ուժը (MPa) ≥ 10<br><br>Երկարացում (%) ≥300<br><br>Հագուստի ժամանակահատվածը (°C × ժ × դ) 100 °C × 24h × 10d<br><br>Լարելուց հետո առաձգական ուժը (MPa) ≥12.5<br><br>Երկարացում (%) ≥125<br><br>Flexion in the cold (-20 ± 2 °C × 4h) Min. ճկման շառավղ. մալուխի 8 արտաքին տրամագիծ, տեսանելի խցաններ չկան |

| | | |
|---|---|---|
| | | Էլեկտրական բնութագրեր (20 °C)<br>1.0-100.0 ՄՀց դիմադրության (Օհմ) 100 ± 15<br>Հետաձգման օֆսետ (նս / 100 մ) ≤552<br>DC դիմադրություն (Ohm / 100 մ) առավելագույն: 9.5<br>Զույգի ուղղակի դիմադրության անհամապատասխանությունը 2.0 |
| 11 | Ցանացային մալուխներ<br><br>/Ցանացային մալուխ արտաքին օգտագործման UTP Cat 5E PE տրոսով/ | <u>Ցանացային մալուխ արտաքին օգտագործման UTP Cat 5E PE տրոսով</u><br>Կառուցվածքային կաբելային համակարգերի համար (դասի D կարգի ալիքներ) in համաձայն ISO / IEC 11801, լայնաշերտ հասանելիության ցանցերի համար:<br>Գործառույթով մինչև 100 ՄՀց հաճախականությամբ ազդանշաններ փոխանցելու համար լարման մինչեւ 145 Վ:<br>Ցածր լարման ցանցերում փակ ստացիոնար տեղադրման համար<br>և հզորություն (Արագ Ethernet, Ethernet, Ethernet plus և այլն)<br>Համապատասխան պահանջներին համապատասխան `ԳOUS Ռ 54429-2011,<br>IEC 61156-2 և ANSI / TIA / EIA-568-A:<br>1. երակ անցկացնելը `պղնձի մեկ մետաղալար<br>2. Մեկուսացում `շարունակական պոլիէթիլեն<br>3. Հիմնական - մեկուսացված հաղորդիչները ոլորված են զույգերով<br>5. Tr աջակցության տարր `ցինկապատ պողպատից մետաղալարային պարան<br>Ծառայության ժամկետ 25 տարի: |
| 12 | Տեսասարքեր<br><br>/Դեմք սկանավորող և իդենտիֆիկացնող սարք/ | <u>Դեմք սկանավորող և իդենտիֆիկացնող սարք</u><br>Օպերացիոն համակարգը LINUX<br>Չափսերը՝ նվազագույնը 7՞՞, էկրանիը LCD, Touch-Screen համակարգով<br>Տեսախցիկը՝ առնվազն 2MP, 2 լինզայով<br>Ցանցը՝ նվազագույնը 10 M/100 M/1000 M self-adaptive<br>Սարքը պետք է ունենա նվազագույնը.<br>-1 ցանցային ինտերֆեյս<br>-1 RS-485 |

| | | |
|---|---|---|
| | | -1 ելքի կոճակ<br>-2-պին դնելու հնարավորություն<br>-2 USB<br>Սարքը պետք է ճանաչի նվազագույնը 6000 քարդ, 6000 դեմք, 50000 իրադարձություն<br>Քարտի տիպը Mifare 1<br>Քարտի հաճախականությունը՝ 13.56MHz<br>Քարտը կարդալու հեռավորությունը՝ 0 ից 5 սմ<br>Դեմքի ճանաչման տևողությունը՝ առավելագույնը 0..2 վ , ճշտությունը ՝ նվազագույնը 99 %, ճանաչման հեռավորությունը՝ 0.3մ-ից 3մ<br>Սարքը պետք է ունենա QR կոդի սկանավորելու հնարավորություն<br>Աշխատանքային ջերմաստիճանը՝ -30 °C to 60 °C |
| Պարտադիր պայման՝ գնման առարկան (ապրանքը) պետք է լինի չօգտագործված, համապատասխանի վերը նշված տեխնիկական բնութագրի պայմաններին:<br>Մատակարարումը, բեռնաթափումը իրականացվում է մատակարարի կողմից:<br>Երաշխիքային ժամկետ՝ ոչ պակաս քան 365 օր: | | |

ԳՆՈՐԴ

/ստորագրություն/

Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված N 2
«08» 11 2021թ. կնքված
ԷԱԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԱՀ-21/53-1 ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 30237240/2 | Համացանցային տեսախցիկներ /Արտաքին տեղադրման ցանցային տեսախցիկ/ | - | - | - | - | - | - | - | - | - | - | 70,500 | 70,500 | 70,500 |
| 3 | 30237240/4 | Համացանցային տեսախցիկներ /Ներքին տեղադրման ցանցային տեսախցիկ ձայնի փոխանցման հնարավորությամբ/ | - | - | - | - | - | - | - | - | - | - | 45,000 | 45,000 | 45,000 |
| 4 | 30237240/5 | Համացանցային տեսախցիկներ /Ցանցային տեսախցիկ 24/7 գունավոր պատկերով/ | - | - | - | - | - | - | - | - | - | - | 45,000 | 45,000 | 45,000 |
| 7 | 32421300/1 | Ցանցային բաժանարար /Ցանցային POE սվիչ/ | - | - | - | - | - | - | - | - | - | - | 26,400 | 26,400 | 26,400 |
| 9 | 32421100/1 | Ցանցային մալուխներ | - | - | - | - | - | - | - | - | - | - | 85,400 | 85,400 | 85,400 |
| 10 | 32421100/2 | Ցանացային մալուխներ /Ցանացային մալուխ արտաքին օգտագործման UTP Cat 5E PE/ | - | - | - | - | - | - | - | - | - | - | 61,000 | 61,000 | 61,000 |
| 11 | 32421100/3 | Ցանացային մալուխներ | - | - | - | - | - | - | - | - | - | - | | | |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | /Ցանցային մալուխ արտաքին օգտագործման UTP Cat 5E PE տրոսով/ | | | | | | | | | | | 103,700 | 103,700 | 103,700 |
| 12 | 32321180/1 | Տեսասարքեր /Դեմք սկանավորող և իդենտիֆիկացնող սարք/ | - | - | - | - | - | - | - | - | - | - | 330,000 | 330,000 | 330,000 |

ԳՆՈՂ

/ստորագրություն/

Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

/ստորագրություն/

Կ.Տ.

*Հավելված N 3*
*«_____» _____2021թ. կնքված*
*ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԱՀ-21/53-1 ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| _____ | _____ |
| _____ | _____ |
| գտնվելու վայրը _____ | գտնվելու վայրը _____ |
| հհ _____ | հհ_____ |
| հվհհ _____ | հվհհ_____ |

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«  »«  » 20  թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «  »  «  » 20  թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ապրանքը հանձնեց | Ապրանքը ընդունեց |
|---|---|
| _____ | _____ |
| ստորագրություն | ստորագրություն |
| _____ | _____ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*«_____» _____2021թ. կնքված*
*ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԱՀ-21/53-1 ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն